ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1545-Ա/2 «15» սեպտեմբերի, 2021 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար երիտասարդ գիտնականներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2021 թ. սեպտեմբերի 15-ի
N 1545-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն կազմակերպում է Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար երիտասարդ գիտնականներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության **Մրցույթ:**

Մրցույթին մասնակցելու Հայտը լրացվում և ներկայացվում է առցանց համակարգի միջոցով (https://forms.gle/7WjdQs1AKwEMeYib8)՝ մինչև 2021 թվականի հոկտեմբերի 20-ը ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 23:59-ին):

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում (http://scs.am/):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնից աշխատանքային օրերին՝ ժամը 14:00 - 17:00, հեռ.՝ 21-01-40 (119):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գիտության կոմիտե

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2021 թ. սեպտեմբերի 15-ի
N 1545-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար երիտասարդ գիտնականներին հավելավճարի (այսուհետ՝ Հավելավճար) տրամադրման հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթն (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2021 թվականի սեպտեմբերի 15-ի N 1545-Ա/2 հրամանի:

1.2 Մրցույթի ֆինանսավորումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» ծախսային ուղղության շրջանակներում:

1.3 Մրցույթն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով և մասնագիտություններով (Հավելված N 1): Մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական պարբերականներում հոդված տպագրած երիտասարդ գիտնականներին կտրամադրվի Հավելավճար:

1.4 Մրցույթն անցկացվելու է երկու ենթածրագրով՝

1.4.1 առաջին՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների ազդեցության գործակից (այսուհետ՝ ԱԳ) ունեցող ամսագրերում տպագրված գիտական հոդվածների համար Հավելավճարի տրամադրման,

1.4.2 երկրորդ՝ հայագիտության բնագավառում (Հավելված N 1-ի 6.1-6.5 ենթակետեր) «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)» միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (այսուհետ՝ ՄԳՇ) ընդգրկված ամսագրերում տպագրված գիտական հոդվածների համար Հավելավճարի տրամադրման:

1.5 Մրցույթի շրջանակներում կատարվող աշխատանքները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից, իսկ համակարգումն իրականացվում է Նախարարի 2021 թվականի մարտի 12-ի N 05-Լ հրամանի համաձայն ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից:

1.6 Հայտը չի քննարկվում, եթե՝

1.6.1 չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,

1.6.2 չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին:

1.7 Հավելավճարի չափը կազմում է՝

1.7.1 առաջին ենթածրագրի դեպքում Հավելավճարը տրվում է գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի (այսուհետ՝ ԳԳԱՑ, Հավելված N 2) և բազային աշխատավարձի (66 140 ՀՀ դրամ) արտադրյալի արժեքին համապատասխան ՀՀ դրամի չափով,

1.7.2 երկրորդ ենթածրագրի դեպքում՝ բազային աշխատավարձի չափով:

1.8 Հայտատուն Մրցույթի արդյունքում կարող է ստանալ առավելագույնը 900 000 ՀՀ դրամ Հավելավճար:

2. Մրցույթի պահանջները

2.1 Մրցույթի մասնակից (այսուհետ՝ Հայտատու) կարող է լինել այն անձը, ով՝

2.1.1 հանդիսանում է Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ կամ ռեզիդենտ,

2.1.2 ծնվել է 1986 թվականի հունվարի 1-ից հետո: Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայած լինելու

դեպքում՝ հավելյալ 2 տարով, երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար հավելյալ 1 տարով:

2.2 Մրցույթին յուրաքանչյուր գիտական հոդված կարող է ներկայացվել մեկ անգամ:

2.3 Ներկայացվող գիտական հոդվածը պետք է տպագրված և հասանելի լինի առցանց կամ տպագիր տարբերակով: Գիտական աշխատանքի տպագրության (publication date) կամ առցանց հասանելի դառնալու (available online) ամսաթիվը պետք է լինի 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 20-ը ներառյալ:

2.4 Յուրաքանչյուր Հայտատու Մրցույթին կարող է ներկայացնել առավելագույնը երկու գիտական հոդված:

2.5 Հայտատուի կազմակերպությունը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում և այդ կազմակերպությունը պետք է նշված լինի տպագրված հոդվածում որպես հեղինակի պատկանելության (affiliation) վայր:

2.6 Հայտատուն չպետք է ընգրկված լինի 2021 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հաղթողների ցանկում:

2.7 Մրցույթին չեն կարող մասնակցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) նախագծերի, թեմաների կամ ծրագրերի ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ «Գիտական սարքերի և/կամ նյութերի ձեռքբերման», «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2020» և «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2021» մրցույթների շահառուների):

3. Հայտերի լրացման և ներկայացման կարգը

3.1 Հայտը լրացնում և ներկայացնում է Հայտատուն՝ առցանց համակարգի *(այսուհետ՝ Համակարգ)* միջոցով՝ մինչև 2021 թվականի հոկտեմբերի 20-ը ներառյալ

(Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 23:59-ին): Համակարգի հղումը՝ https://forms.gle/7WjdQs1AKwEMeYib8:

3.2 Կոմիտե են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

3.2.1 Հայտատուի դիմումը (Հավելված N 3),

3.2.2 Համակարգում ձևավորված Հայտի տիտղոսաթերթը (Հավելվածը N 5), որում նշվում է Հոդվածի DOI-ն (կամ դրա բացակայության դեպքում՝ հոդվածի էլեկտրոնային հղումը), ամսագրի անվանումը, ամսագրի ISSN-ը, հեղինակների քանակը, ամսագրի քառորդը (quartile) և կատեգորիան (category) ըստ «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ի (https://www.scimagojr.com/journalrank.php) 2020 թվականի տվյալների, հոդվածում նամակագրություն վարող (corresponding author), առաջին կամ վերջին հեղինակ լինելու տեղեկատվությունը, հոդվածում նշված Հայտատուի կազմակերպությունների պատկանելության (affiliation) քանակը, տեղեկություն այն մասին, թե ներկայացված գիտական հոդվածը **1.4** կետում նշված շտեմարաններում Հայտատուի առաջին տպագրությունն է և «Google Scholar» կայքում իր առցանց հաշվի հասցեն,

3.2.3 տեղեկանք աշխատավայրից, Հայտատուի զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ, որում նշված է նաև տեղեկանքի տրամադրման ամսաթիվը և վավերացված է կնիքով,

3.2.4 տեղեկանք հոդվածի բոլոր համահեղինակներից, որոնց աշխատավայրի պատկանելությունը Հայաստանի Հանրապետությունում է, առ այն, որ նրանք տեղյակ են Հայտատուի Հայտ ներկայացելու մասին (Հավելված N 4),

3.2.5 անձնագրի և սոցիալական քարտի պատճենը:

3.2.6 Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ զինգրքույկը,

3.2.7 երեխա ունենալու դեպքում՝ երեխայի ծննդականը:

3.3 Հայտատուն պահանջվող փաստաթղթերը Կոմիտե է ներկայացնում առձեռն 2021 թվականի **հոկտեմբերի 21-22-ը**՝ ժամը 10:00-13:00-ին և 14:00-17:00-ին (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ): **Տիտղոսաթերթը պետք է ստորագրված և կնքված լինի գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) կամ փոխտնօրենի (պրոռեկտորի) կողմից՝ Հայտում ներառված գիտական արդյունքների հեղինակային բնույթը, ինչպես նաև առանց հեղինակների և**

աղբյուրների նշման փոխառությունների բացառումը հավաստելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն իրավունք ունի հրապարակելու Հայտատուի տիտղոսաթերթը:

4. Հայտերի ընտրությունը և վարկանիշային ցանկի ձևավորումը

4.1 Հայտերի ընտրությունն իրականացվելու է Հավելված N 2-ի հիման վրա ձևավորված ԳԳԱՑ վարկանիշային տվյալներին համապատասխան: Հայտերի ԳԳԱՑ-ների հավասարության դեպքում դրանք դասավորվում են պատահականության սկզբունքով:

4.2 Հայտերի գնահատումն իրականացվում է Խորհրդի կողմից: Խորհուրդը Հայտերի գնահատման ընթացքում ծագած հարցերի պարզաբանման համար կարող է անցկացնել հարցազրույց, պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն: Հայտերի գնահատումից հետո Խորհուրդը Կոմիտեին է ներկայացնում իր կողմից հաստատված Հայտերի վերջնական գնահատականների նվազման կարգով ձևավորված վարկանիշային ցանկը և շեմային գնահատականի առաջարկը:

4.3 Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշմամբ հաստատված «Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» ծախսային ուղղությամբ նախատեսված ծավալներից, 5 օրացուցային օրերի ընթացքում որոշում է շեմային գնահատականը, որից բարձր կամ դրան հավասար գնահատված Հայտերը երաշխավորվում են ֆինանսավորման: Նախարարը հաստատում է Մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված Հայտատուների ցուցակը (այսուհետ՝ Շահառուներ) և հատկացման չափը:

4.4 Կոմիտեն 5 աշխատանքային օրերի ընթացքում գիտական կազմակերպություններին (բուհերին) տրամադրում է տվյալ գիտական կազմակերպությունում (բուհում) աշխատող Շահառուների ցուցակը և հատկացման չափը:

4.5 Կոմիտեի գլխավոր քարտուղարի և գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ Մրցույթի արդյունքներով

ֆինանսավորման երաշխավորված Շահառուներին Հավելավճարի տրամադրման նպատակով:

5 Ակնկալվող արդյունքը

5.1 Ֆինանսավորումից հետո մեկ տարվա ընթացքում Շահառուները պետք է գիտահանրամատչելի ձևով ներկայացնեն իրենց գիտահետազոտական աշխատանքը (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն) և նյութը տրամադրեն Խորհրդին՝ տարածելու նպատակով:

Հավելված N 1
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա

1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.4. Քիմիա

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3. Մեխանիկա

2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5. Քիմիական տեխնոլոգիաներ

2.6. Նյութագիտություն

2.7. Բժշկական սարքաշինություն

2.8. Էկոլոգիա

2.9. Կենսատեխնոլոգիա

2.10. Նանոտեխնոլոգիա

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն

3.2. Կլինիկական բժշկություն

3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն

4.2. Բուսաբուծություն

4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն

4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն

5.2. Տնտեսագիտություն և գործարարություն

5.3. Մանկավարժական գիտություններ

5.4. Սոցիոլոգիա

5.5. Իրավունք

5.6. Քաղաքական գիտություններ

5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն

5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն

6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն

6.3. Փիլիսոփայություն, էթիկա

6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն

6.5. Արվեստագիտություն

Հավելված N 2
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ

Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

Առաջին ենթածրագրի դեպքում՝

ԳԳԱՑ =A ×Q × Գ(հեղ) × Գ(դիրք) × Գ(պատկ.)

Երկրորդ ենթածրագրի դեպքում՝

ԳԳԱՑ =A × Գ(հեղ) × Գ(դիրք) × Գ(պատկ.)

Որտեղ՝
Q = 0.5, երբ Հոդվածի քառորդը պատկանում է 4-րդ խմբին:

Q = 1, երբ Հոդվածի քառորդը պատկանում է 3-րդ խմբին:

Q = 2.5, երբ Հոդվածի քառորդը պատկանում է 2-րդ խմբին:

Q = 6, երբ Հոդվածի քառորդը պատկանում է առաջին խմբին:

A = 2, երբ ներկայացված գիտական հոդվածը Հայտատուի առաջին տպագրությունն է ԱԳ ունեցող կամ ՄԳՇ ընդգրկված գիտական ամսագրերում:

A = 1, երբ Հայտատուն մեկից ավել տպագրություն ունի ԱԳ ունեցող կամ ՄԳՇ ընդգրկված գիտական ամսագրերում:

Գ(հեղ.) = 1, եթե հոդվածի հեղինակների թիվը 1-4 է,

= 0.75, եթե հոդվածի հեղինակների թիվը 5-10 է,

= 0.5, եթե հոդվածի հեղինակների թիվը 11-30 է,

= 0.1, եթե հոդվածի հեղինակների թիվը 31-1000 է,

= 0.05, եթե հոդվածի հեղինակների թիվը մեծ է 1001-ից:

Գ(դիրք) = 1, եթե Հայտատուն հոդվածի առաջին, վերջին կամ նամակագրություն իրականացնող հեղինակն է (corresponding author),

= 0.5, եթե Հայտատուն հոդվածի համահեղինակ է,

Գ(պատկ.) = 1; եթե ներկայացված հոդվածում Հայտատուն նշել է պատկանելիության (affiliation) մեկ վայր,

= 0,75; եթե Հայտատուն հոդվածում նշել է պատկանելության (affiliation) երկու վայրեր,

= 0,5; եթե Հայտատուն հոդվածում նշել է պատկանելության (affiliation) երեք և ավելի վայրեր:

Հավելված N 3
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(բնակության հասցե)
_____
(հեռախոսահամար)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթին -————---- ծածկագրով ներկայացված Հայտը:

Հաստատում եմ, որ ծանոթացել եմ մրցույթի հրավերի պայմաններին և վերջիններիս հետ համաձայն եմ:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2021թ.

Հավելված N 4
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքով հաստատում ենք Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի մասնակցության ----------——— դիմումը:
(Հայտատուի անուն ազգանունը)

Հոդվածի doi: xxxxxxxxxxxxx, համահեղինակներ՝

համահեղինակ 1՝

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

համահեղինակ 2՝

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

համահեղինակ 3՝

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

համահեղինակ 4՝

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Հավելված N 5
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Ուղարկված է՝———— **Ծածկագիր ————**

1.	**Ազգանուն Անուն Հայրանուն**	
2.	**Ծննդյան օր/ամիս/տարի**	
3.	**Հեռախոսահամար**	
4.	**Էլեկտրոնային հասցե**	
5.	**Աշխատավայր** (կազմակերպություն, հասցե, հեռախոսահամար, էլ. հասցե)**, զբաղեցրած պաշտոն**	
6.	**Ամբիոն/Լաբորատորիա/գիտական խումբ**	
7.	**Կրթություն, որակավորում** (կրթական որակավորում, ֆակուլտետ, բուհ)	
8.	**Գիտական աստիճանը (առկայության դեպքում)**	
9.	**Google scholar համակարգում հղումը (**որում պետք է առկա լինեն առնվազն Հայտում նշված հոդվածները**)**	

Մրցույթի առաջին ենթածրագրի հոդվածները			
Ներկայացվող առաջին հոդվածի DOI		**Ներկայացվող երկրորդ հոդվածի DOI**	
Ամսագրի անվանում		Ամսագրի անվանում	
ISSN		ISSN	
Հեղինակների քանակ		Հեղինակների քանակ	
Ամսագրի քառորդը		Ամսագրի քառորդը	
Կատեգորիան		Կատեգորիան	
Նամակագրություն վարող, առաջին, վերջին հեղինակ		Նամակագրություն վարող, առաջին, վերջին հեղինակ	

(Այո/Ոչ)		(Այո/Ոչ)	
Պատկանելության քանակը		Պատկանելության քանակը	
Առաջին տպագրություն (Այո/Ոչ)		Առաջին տպագրություն (Այո/Ոչ)	

Մրցույթի երկրորդ ենթաձրագրի հոդվածները			
Ներկայացվող առաջին հոդվածի DOI		**Ներկայացվող երկրորդ հոդվածի DOI**	
Ամսագրի անվանում		Ամսագրի անվանում	
ISSN		ISSN	
Շտեմարանի անվանում		Շտեմարանի անվանում	
Հեղինակների քանակ		Հեղինակների քանակ	
Նամակագրություն վարող, առաջին, վերջին հեղինակ (Այո/Ոչ)		Նամակագրություն վարող, առաջին, վերջին հեղինակ (Այո/Ոչ)	
Պատկանելության քանակը		Պատկանելության քանակը	
Առաջին տպագրություն (Այո/Ոչ)		Առաջին տպագրություն (Այո/Ոչ)	

Հայտատու՝ _____ _____

(անուն ազգանուն) (ստորագրություն)

Կազմակերպության
ղեկավար՝ _____ _____

(անուն ազգանուն) (ստորագրություն)

«____» _____ 202_ թ. **Կ. Տ.**